

անտառապուրակ-գրոսայգի հիմնելը՝ այն կոչելով Ն. Ստեփանյանի անունով (կամ այդ տեղում կա մի ժայռ, որի վրա փորագրվի կամ կպցվի մի քարե հուշատախտակ նշելով, որ 1943թ. այս տեղում այցելել և հյուրասիրվել է Նելսոն Ստեփանյանը:

Հրազդան գետի ծախ և աջ ափերին լճակ ու ռեստորան կառուցելով՝ Ս. Միքայելյանը կարծես իր հոգու աչքերով ու հայրենի գյուղի նախնիների արյան կանչով կամրջել է գյուղի երկու հին թաղամասերը՝ գյուղի անցյալն ու ներկան՝ ոգի ու շունչ տալով վաղուց մոռացված պատմական Սուղազյանին: Իսկ Ն. Ստեփանյանի անվան անտառապուրակ-գրոսայգի հիմնելով նա կկամրջի նաև Քարվանսարա- Սուղազյան – Վանատուրն ու Շուշի- Արցախը, որի համար ինքն ու համագյուղացի ազատամարտիկները արյուն են թափել անուն, փառք ու պատիվ բերելով հայրենի Քարվանսարա- Վանատուրին, Հրազդան քաղաքին ու հայ ժողովրդին:

Ուրեմն Ձաքարյաճների՝ Դվինից դեպի իրենց զինապահեստների ու հարստության պահեստավայր Լոռի բերդ և իշխանական- հոգևոր կենտրոն Խոժոռնի բերդ զնացող ճանապարհի մի ճյուղը անցել է Սուղազյան (Քարվանսարա) - Թայշարուխ (Մեղրածոր) հատվածով և ի վերջո Թայշարուխում՝ իր կառուցած եկեղեցուն է իր վերջին հանգրվանը գտել- թաղվել Իվանե Ձաքարյանը (Սմբատյանց, էջ 368,369):

Ծորափոր- Ծորուփոր գավառը դա հայկական Շուշավեր- Շահումյան գյուղի (Վրաստանում) և Շուշավեր գետի հովիտն է մինչև Դեբեդ գետի ստորին հոսանքը Վրաստանի Մառնեուլի շրջանում, Ծոփագետի ափին գտնվող Ծոր բերդ- բնակավայր կենտրոնով, որտեղ արդյունահանվում է պղնձի հանքաքար: Նրա մեջ էր մտնում Հայաստանի Թումանյանի շրջանի Ախթալա ավանի պղնձահանքավայրը: Վրացիները Ծորափորը կոչել են Սոմխեթ, իսկ թուրքերը՝ Բորչալու- թուրքական մի ցեղի անունով, որոնց Շահաբասը 1603 թ. բերել և բնակեցրել է այդ տեղում («Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 2, էջ 859):

Սուղազյանով է անցել նաև Սևանից Երևան ու Ապարան (Նիգ) տանող հին ճանապարհներից մեկը: Եվ վերջապես Սուղազյանով է անցել ու Սուղազյանում է թուրքերի դեմ կռվել ու Նաղի խանին սպանել Խաչատուր Աբովյանի «Վերքի» գլխավոր հերոս Աղասին («Սուղազյան մեյլ օր Նաղի խանին՝ էս ահագին գազանին, որ հարյուր մարդի չէր ասիլ, թե աստված ա ստեղծել, են տեղը քցեց, որ իր մարդկերանցովը մեկ բարձր թափից վեր ընկավ ու ղզլբաշի հողը մտավ, որ պրծավ, թե չէր Աղասու ձեռին պետք է իր թուր սպանած անմեղ հայերի արնի ջառըմեն տար») (Խ. Աբովյան «Վերք Հայաստանի». 1981թ., էջ 183-184 և էջ 340-ի ծանոթագրություններ):

Ախտա-Հրազդանի տարածքը նախկինում մտնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի մեջ, որը սահմանակից էր հյուսիսից՝ Գուգարքի Տաշիր ու Արցախի Մեծկուենք, հարավից՝ Մազազ ու Կոտայք և արևմուտքից Նիգ գավառներին: Այդ գավառը հիմնականում ընդգրկել է ներկա Հրազդանի ու Սևանի շրջանների մեծագույն ու Կրասնոսելսկի շրջանի հյուսիսային մասը, ինչպես նաև Աղստև գետի վերին հոսանքի շրջանը՝ հին Հովքը կամ Միափորը (այժմ Դիլիջան):

Հայկական պետականության անկումից հետո պարսիկ և թուրք տիրապետողների կողմից օգտագործվել է որպես ամառանոց և արոտավայր: 13-15-րդ դարերում այդ տարածքում ստեղծվել են հայկական իշխանություններ (Ձաքարյան, Պախլավունիներ, Խաղբակյաններ կամ Պոռոշյաններ): Հետագայում վարչականորեն մտնում էր Երևանի խանության Հայկական մարզի Նոր Բայազետի գավառի, իսկ 1922 թվականից՝ Երևանի գավառի Ներքին Ախտալի գավառամասի մեջ:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄԵԹՈԴԻԿԱ

ՏՐՈՇՎՈՂ ՈՐՈՇԻՉԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

Որոշիչը գոյականով արտահայտված անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս տվյալ գոյական անդամի որակական, քանակական և նման կարգի հատկանիշները՝ տարբեր կողմերից բնորոշելով իր լրացյալը: Ուսուցիչը տրոհվող որոշիչի ուսուցումը սկսում է՝ աշակերտներին հիշեցնելով, որ այն կարող է արտահայտվել գոյականի ուղղական, սեռական, բացառական և գործիական հոլովներով (*քար* սիրտ, *ծով* աչքեր, *գարնան* զարթոնք, *սարի* շուշան, *մարմարից* արձան, *տուֆից* շենք, *շնիկով* տիկին, *մսով* փլավ), ածականով (*խելացի* երեխա, *արծաթե* գդալ), թվականով (քսան աշակերտ, *երրորդ* դասարան), դերանուններով (*յուրաքանչյուր* ծնող, այսպիսի երկիր), հատկանիշ ցույց տվող դերբայներով (*քնած* երեխա, *լացող* ուռենի, *խմելու* ջուր), մակբայներով (*դանդաղ* ընթացք, *արագ* վերելք), տարբեր բառակապակցություններով (*վաղուց մոռացված* երգ, *պտուղ չտվող* ծառեր և այլն):

Ուսուցչի պահանջով այս և նման օրինակները գործածվում են նախադասության մեջ: Աշակերտներին արդեն ծանոթ այս նյութը ուսուցչի օգնությամբ կրկնվում է և հարցերի միջոցով ամփոփվում: Ի՞նչ է ցույց տալիս որոշիչը, ո՞ր խոսքի մասերով է արտահայտվում, բերել գոյականի տարբեր հոլովներով, ածականով, դերբայներով արտահայտվող որոշիչների օրինակներ և գործածել նախադասությունների մեջ:

Ուսուցչին օգնելու նպատակով ներկայացնում ենք ժամանակակից հայերենի տրոհվող որոշիչի արտահայտությունը՝ գիտակցելով, որ առանց այս տեսական նյութի և՛ ուսուցչի, և՛ աշակերտի համար դժվարին կլինի ճիշտ կողմնորոշվել տրոհվող լրացումների կառուցվածքային առանձնահատկությունները բացատրելիս:

Տրոհվող որոշիչն արտահայտվում է՝

1. *Ետադաս բազմակի ածականներով*, որոնք բացահայտում են որոշյալի հատկանիշը տարբեր կողմերից: Ածականով արտահայտված ետադաս որոշիչը տրոհվում է այն դեպքում, երբ նախադասության բազմակի անդամներ են: Օր.՝ Իրիկունը եկավ, տնետուն մտավ, վառեց ճրագներ՝ *կարմիր ու սպաժառ* (Ավ. Իսահակյան, հ.1, էջ 123): Նրա ականջներից կախված էին խաղողի ողկույզ հիշեցնող զինվոր՝ *չողուն ու հմայիչ* (Ս. Խանգալյան, 2, 90): Որքան կարելի է կույր լինել և չտեսնել մեր շտապողականությունը՝ *անհեռատես ու զգացունքմային* (Պ. Ջեյթունցյան, 2, 164):

Երբեմն բազմակի ածականները կարող են հանդես գալ բառակապակցություններ կազմած իբրև համասեռ որոշիչներ՝ երկաստիճան կառույցներով: Օր.՝ Լինում է իբր գյուղացի մի մարդ՝ *պղքատ, օրական ապրուստի կարոտ* (Հ. Թումանյան 1,231): Տերասածև բարձրանում են ժայռերը՝ *մեկը մյուսից խոժոռ ու ահռելի* (Բակ. Ե, 1,222):

Տրոհվող որոշիչները անվանական, գոյականական ստորոգելիների մոտ հանդես են գալիս որպես տրոհվող լրացումներ՝ արտահայտելով բաղադրյալ ստորոգյալի վերադրի հատկանիշը բազմակողմանիորեն: Օր.՝ Նույն աղջիկն էր՝ *չքնաղ բոլորից, հոգուս մտերիմ, հարազատ այնպես* (Ա. Իսահակյան, 1,180): Աշխարհն էլ

ասես մի հեքիաթ լինի՝ *անսկիզբ, անվերջ, հրաշք դյուրական* (նտ. 2, 60):

2. *Գոյականի տարբեր հոլովներով, գոյականական բառակապակցությամբ*.

Տրոհված որոշիչը հանդես է գալիս նաև գոյականի բացառական և հատկապես գործիական հոլովներով, ընդ որում, գոյականի վերոհիշյալ հոլովները, առանձին վերցրած, տրոհվող լրացում չեն կարող լինել: Այդ հոլովներով արտահայտված գոյականը կարող է տրոհվող որոշիչ լրացում դառնալ լրացում հանդիսացող այլ բառերի սերտ միասնությամբ բառակապակցությամբ: Օր.՝ *ժայռերի վրա երևանի բերդն էր՝ հաստ ու երկար պարիսպներով, մարտական աշտարակներով* (Ս. Խանգաղյան, 2, 292): Այդ մի մատաղ ու խարտյաշ եղնիկ էր՝ *խորունկ, սև ու ցինջ աչքերով* (Ավ. Իսահակյան 3, 27): Մյուսը Մոկաց Արտակ նախարարն էր՝ *խոհուն, թախծոտ աչքերով, նուրբ, սևասաթ հոնքերով* (Դ. ղեմիրճյան 7, 14):

Այս և նման օրինակներում տրոհված որոշիչներ են ոչ թե գործիական հոլովով դրված առանձին գոյականները, այլ անվանական բառակապակցությունները, որոնք միասնաբար դիտվում են իբրև նախադասության մեկ անդամ, շարահյուսական մեկ միավոր:

Նման կապակցությունների մեջ գոյականի բացառական հոլովը քիչ է հանդես գալիս: Օր.՝ *Նա մի պանդուխտ երիտասարդ էր՝ զուրկ ծնողներից, հեռու ազգականներից* (Ծիրվանգաղե 1, 329): Հեռվում երևում էին այգիների գորշ պարիսպները և տների պատերը՝ *նույն հին կավից* (Բակունց 1, 329):

3. *Դերբայական դարձվածով* – Տրոհվող վերջադաս որոշիչն արտահայտվում է դերբայական դարձվածով բառակապակցություններով, որոնց մեջ որպես գերադաս անդամ են հանդես գալիս անորոշ, հարակատար և ենթադրական դերբայները: Օր.՝ *Ես կգամ որպես մոռացված մի երգ՝ հյուսված աղոթքից, սիրուց ու ծաղկից* (Վ. Տերյան 1, 87): Արտերի մեջ երևում էին հատուկներ կաղնիներ՝ *ծոված, կռացած, կայծակից խանձված* (Բակունց 1, 78): Մանուկներ են *տառապանքից իմաստնացած* (Վ. Դավթյան 2, 341): Բանի դեռ նա չէր դավաճանել ինձ, *ես մի արծիվ էի՝ հոգով ու մտքով բարձունքներում սավառնող* (Նար-Դոս 1, 117):

Հարակատար դերբայը, առանց դերբայական դարձվածի կազմիչ լինելու էլ, կարող է տրոհված ձևով հանդես գալ, եթե նախադասության բազմակի անդամ է: Օր.՝ *Ընկերներս՝ մեռած, կորած, Հոգուս խորքով անցկացան* (Ավ. Իսահակյան 1, 103):

Տրոհվող որոշիչը կարող է արտահայտվել նաև անորոշ դերբայի սեռական հոլովով կազմված բայական բառակապակցությամբ: Օր.՝ *Եկել էր ժամանակը՝ սոսյաց պուրակը կամ Բագավանի անտառը գնալու* (Պ. Ջեյ-թունցյան 2, 313):

4. *Կապով ու կապվող բառով* – Կապը և կապի խնդիրը լրացում և լրացյալի հարաբերությամբ տրոհվելու հետևանքով կարող են ձեռք բերել նախադասության ինքնուրույն անդամի դեր: Վերջինս ձևավորվում է պես, նման, մասին, մեջ կապերով ու կապվող բառով կամ կապի խնդիրներով, ընդ որում՝ կապական կառույցը հաշի աստիճանը: Օր.՝ *Հետո ինձ մոտեցավ մի կին՝ ցնցոտիների մեջ, ոտքերը բոբիկ* (Բակունց 1, 161): Մեծ սեջապես տեսան... սևահանդերձ մարդկանց մի խումբ՝ *նման գիշերային ուրուների* (Ս. Ջորյան 8, 186):

5. Տրոհվող որոշիչը կարող է արտահայտվել նաև *թվականով և այլ խոսքի մասերով* ու նրանց բառակապակցություններով, շարահյուսական այլ կարգի կառույցներով: Այս կարգի որոշիչը ևս նախորդների նման ուղեռ քաշել կին էր՝ *հագիվ քսան տարեկան, չթի հնամաշ դերիայով* (Նար-Դոս 1, 64): Վերկից մի մարդ եկավ քնրում *ամրապնդելու*, նա համարում էր ապարդյուն աշխատանք (Ս. Ջորյան 8, 46): Ամենուրեք ձորեր էին՝ ... *մեզու՝ Մեսրոպյան տառի կնիքը վրան* (Պ. Սևակ 4, 225):

Հայտնի է, որ որոշիչը հնչերանգային և իմաստային միասնություն ունի իր լրացյալի հետ, երբ նախադասում սիրում (Ե. Չարենց):

Բերված օրինակներում ընդգծվածները որոշիչ-որոշյալի կապակցություններ են, միասնաբար դիտվում են իբրև իմաստային ու հնչերանգային մի ամբողջություն: Եվ տրոհվում՝ նախադաս շարադասության պատճառով: Հաճախ կենդանի և գրավոր խոսքում փոխվում է որոշիչ-որոշյալի շարադասության սովորական ձևը, արտահայտիչ: Բայց շրջում շարադասության դեպքում անգամ որոշիչը որոշյալից չի կարող տրոհվել, եթե ծառան ու ձմեռվա վիշապածայն *բուքը վսեմ* (նտ):

Այնուհետև ուսուցիչը գրատախտակին գրել է տալիս իր կողմից ընտրված այսպիսի օրինակներ. Ես կգամ որպես մոռացված մի երգ՝ *հյուսված աղոթքից, սիրուց ու ծաղկից* (ՎՏ): Իմ մեջ այդվում է կարեկից մի սիրտ՝ *լացող հավիտյան* (ԱԻ): Հեռվում երևում էր *վեհ* Մասիսը՝ *կապույտ շղարշ հագած* (ԵԶ):

Ուսուցչի պահանջով աշակերտները գրում են որոշիչները և ընդգծում: Ապա դիմում են մի հետաքրքրական երգ, *հավիտյան լացող մի սիրտ, Կապույտ շղարշ հագած Մասիս*: Ուսուցիչը բացատրում է, որ շարադասության այսպիսի փոփոխության հետևանքով բանաստեղծության հմայքը և արտահայտչականությունը ինչ-որ չափով վերանում են: Այնուհետև ուսուցիչը պահանջում է համեմատել նախադաս գործածված «մոռացված»:

«կարեկից», «վեհ» որոշիչները «*հյուսված աղոթքից*», «*սիրուց ու ծաղկից*», «*լացող հավիտյան*» և «*կապույտ շղարշ հագած*» որոշիչների հետ: Համեմատությունից պարզվում է, որ առաջինները արտահայտվել են մեկական բառով, իսկ երկրորդները՝ մեկից ավելի բառերի բառակապակցությամբ:

Ապա ուսուցիչը բացատրում է, որ նախադաս մեմանադամ որոշիչներն իրենց որոշյալներից հնչերանգային դադարով չեն անջատվել, մինչդեռ երկրորդ դեպքում, երբ արտահայտվում է ծավալուն բառակապակցությամբ կամ բազմակի ածականներով ու այլ խոսքի մասերով և հանդես է գալիս շրջում շարադասությամբ, սովորաբար իր որոշյալից առանձնանում է հնչերանգային դադարով և տրոհվում համապատասխան կետադրությամբ, որով ավելի է ընդգծվում: Տրոհվող որոշիչը, իմաստային ինքնուրույնություն ունենալով հանդերձ, արտահայտում է առարկայի որակական հատկանիշի լրացուցիչ նրբերանգ, որը երբեմն հնարավոր չէ արտահայտել չտրոհված լրացումով:

Այնուհետև ուսուցիչը նշում է, որ որոշիչները կարող են արտահայտվել մեկ բառով, երկու և ավելի բառերով (բազմանդամ որոշիչներ), որ որոշիչները կարող են դրվել որոշյալից առաջ և ունենալ առաջադաս շարադասություն ինչպես նաև՝ որոշյալից հետո և ունենալ ետադաս շարադասություն:

Ետադաս որոշիչը իր որոշյալից տրոհվում է, երբ արտահայտվում է ծավալուն բառակապակցություններով, բազմակի ածականներով կամ այլ խոսքի մասերով, երբ նույն որոշյալը ժանրաբեռնված է լինում և՛ նախադաս, և՛ վերջադաս բազմակի որոշիչներով (*տե՛ս Ա. Մարության, Տրոհվող լրացումները արդի հայերենում, Երևան, 1975, էջ 23*):

Ուսուցիչն առանձնակի ուշադրություն է դարձնում նախադասության անդամների շրջում շարադասությանը, որն ունի ոճական-արտահայտչական կարևոր արժեք, որի դեպքում տրոհվող որոշիչն ավելի է ընդգծվում, տրամաբանական հատուկ շեշտ ստանում: Գեղարվեստական, առանձնապես բանաստեղծական խոսքի անվանի վարպետները հաճախ խուսափում են շարադասական միօրինակությունից և ընտրում են շարադասական այն տարբերակը, որը խոսքը դարձնում է առավել հուզական, բանաստեղծական և քնարական: Օր.՝ Մթնում բորբոքվեց մի արյունոտ համբույր՝ *մեղքի պես թովիչ, ցավի պես խելառ* (Վ. Տերյան 1, 41): Եվ անցած կյանքս կդառնա լեգենդ՝ *օրերի նման անդարձ ու վսեմ* (Ե. Չարենց):

Շրջում շարադասության ոճական-արտահայտչական արտահայտությունն է այն, որ հեղինակը որոշակի նպատակադրումով նախադասության մեջ շեշտում, ընդգծում է իմաստային տեսակետից էական նշանակություն ունեցող բառը կամ կապակցությունը: Այս լրացուցիչ բացատրությունից հետո ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է գրատախտակին գրված նոր օրինակներին. Այդ *խորունկ, սև ու ցինջ աչքերով* մի մատաղ եղնիկ էր (ԱԻ): Եղբայրասպանությունը մի ոճիր է՝ *աստծուց ու մարդկանցից անիծված* (Մուր.): Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝ *անսկիզբ, անվերջ* (ԱԻ):

Ուսուցչի պահանջով որոշիչները գործածվում են որոշյալներից հետո. Այդ մի մատաղ եղնիկ էր՝ *խորունկ, սև ու ցինջ աչքերով*: Եղբայրասպանությունը մի ոճիր է՝ *աստծուց ու մարդկանցից անիծված*: Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝ *անսկիզբ, անվերջ*:

Օրինակները համեմատելով միմյանց հետ՝ աշակերտները ասում են, որ սովորական շարադասության դեպքում չկա հնչերանգային դադար, մինչդեռ շրջում շարադասության դեպքում այդ անջատվածությունն առկա է: Այնուհետև ուսուցիչը բերում է այլ օրինակներ, որոնց իման վրա բացատրում է տրոհվող որոշիչի շարադասությունը: Օր.՝ Մյունյաց իշխանուհին նրա միակ ժառանգն էր՝ *իր վեհ կեցվածքով, թուխ մետաքս հագուստով և ոսկի ու արծաթ զարդերով* (Ստ. Ջորյան):

Ուսուցչի պահանջով աշակերտները այդ որոշիչները գործածում են՝ նախադասության սկզբում, մեջտեղում և վերջում: Այսպես. *Իր վեհ կեցվածքով, թուխ մետաքս հագուստով և ոսկի ու արծաթ զարդերով* Մյունյաց իշխանուհին նրա միակ ժառանգն էր: Մյունյաց իշխանուհին՝ *իր վեհ կեցվածքով, թուխ մետաքս հագուստով և ոսկի ու արծաթ զարդերով*, նրա միակ ժառանգն էր: Նրա միակ ժառանգն էր Մյունյաց իշխանուհին՝ *իր վեհ կեցվածքով, թուխ մետաքս հագուստով և ոսկի ու արծաթ զարդերով*:

Վերլուծությունից պարզվում է, որ վերջադաս շարադասության դեպքում բազմակի և ծավալուն որոշիչներն ունեն հնչերանգային անջատվածություն, որն էլ գրավոր խոսքում արտահայտվում է բութով, ստորակետով (եթե նախադասությունը շարունակվում է) և բութով՝ վերջադաս շարադասության դեպքում:

Տրոհվող լրացումների, մասնավորապես տրոհվող որոշիչի ուսուցումը սովորաբար կապվում է որոշ դժվարությունների հետ, քանի որ աշակերտները դյուրին չեն ընկալում նախադասությունների՝ ծավալուն բառակապակցություններով արտահայտված երկրորդական անդամները: Բնականաբար, ուսուցիչը ուսուցման ընթացքում պետք է կիրառի ճիշտ մեթոդներ՝ տրոհվող որոշիչի ուսուցումը դյուրընթացեցնելու դարձնելու համար:

Հայտնի է, որ սովորաբար ամեն մի չտրոհվող լրացում ունի իր համապատասխան տրոհվող տեսակը: Տրոհվող որոշիչն ուսուցանելիս, որպեսզի աշակերտները հեշտությամբ ընկալեն տրոհվող լրացումները, ուսուցիչը ամենից առաջ պիտի բերի չտրոհվող, սովորական նախադաս շարադասությամբ որոշիչ օրինակներ՝ մեմանդամ և բազմանդամ, ապա դրանց համապատասխան նույն պաշտոնը կատարող տրոհվող որոշիչի օրինակներ կամ այն դարձնի տրոհվող որոշիչ,

օրինակ՝

Չտրոհվող. Մյուս օրը գյուղացիները գտնում են *հրացանի գնդակներով խոցոտված* նրա մարմինը: Նա շատ առույգ, *վարդագույն դեմքով, արծաթ մազերով* ծերունի էր: Բայց *մեմո ու փոքրոգի* թագավորը՝ նախանձում էր խիստ նրա հռչակին:

Տրոհվող. Մյուս օրը գյուղացիները գտնում են նրա մարմինը՝ *հրացանի գնդակներով* խոցոտված (Ավ. Իսահակյան, 3, 305):
Նա շատ առույգ ծերունի էր՝ *վարդագույն դեմքով, արծաթ մազերով* (Դ. Դեմիրճյան, 7, 243):
Բայց թագավորը՝ *Նենգ ու փոքրոգի*, նախանձում էր խիստ նրա հռչակին (Ավ. Իսահակյան 2, 191):

Աշակերտների ուշադրությունը հրավիրելով այս օրինակների վրա՝ ուսուցիչը պահանջում է նախ գտնել որոշիչները, այնուհետև բացատրում է, որ եթե նախադասության գլխավոր պնդումների և նրանց լրացումների միջև հնչե՞րանգային անհրաժեշտ դա՞րար չկա, միմյանցից տրոհել չի կարելի: Ապա նշում է նախադաս և վերջադաս որոշիչների հնչե՞րանգային, շարադասական տարբերությունը. եթե որոշիչը առաջադաս է, ապա այն տրոհվող լրացում չէ, իսկ եթե վերջադաս է, ապա տրամաբանական շեշտ է կրում, և առկա է հնչե՞րանգային անջատվածություն: Այս դեպքում որոշիչն իր որոշյալից տրոհվում է բուժով (սխալ է ստորակետով տրոհելը): Իսկ եթե ծավալուն որոշիչը ընկնում է ենթակայի և ստորոգյալի միջև (տես վերջին օրինակը), ապա այն ենթակայի նկատմամբ վերջադաս դիրք ունի, տրոհվող որոշիչ է, տրոհվում է բուժով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով: Ուսուցիչը, առաջին շարքի նախադասությունների մեջ որոշչի լրացական կապակցությունները համեմատելով երկրորդ շարքի նույն նախադասությունների տրոհվող լրացումների հետ, աշակերտների մեջ ամրապնդում է տրոհվող լրացման գաղափարը և բացատրում դրանց տարբերակիչ առանձնահատկությունները:

Տրոհվող որոշչի հետ կապված՝ ուսուցիչը կարող է հանձնարարել խոսքի և բառապաշարի զարգացմանը նպաստող հետևյալ տարաբնույթ աշխատանքները.

1. Քանի որ որոշիչը սերտորեն կապված է մակդիրի գաղափարի հետ, որպես գեղարվեստական արտահայտչամիջոցի, ուսուցիչը բացատրում է, որ չնայած մակդիրը՝ գեղարվեստական՝ որոշիչը, և սովորական որոշիչը ունեն ընդհանուր կողմեր, բայց տարբեր են իրենց դերով ու նպատակներով, քանի որ ամեն մի որոշիչ դեռ մակդիրի արժեք չունի: Մակդիրը խոսքի պատկերավորման միջոց է՝ հեղինակային ընդգծված վերաբերմունքով, ունի իմաստային խորություն, հարստացնում է խոսքի արտահայտչականությունը, զգացական կողմը, այն դարձնում վառ ու տպավորիչ, ընթերցողի մեջ առաջ բերում որոշակի տրամադրություն: Ուսուցիչը աշակերտների միջոցով բերում է այսպիսի օրինակներ՝ *սգավոր ծառ, տխուր կյանք, մռայլ տանջանք, փափուկ ժպիտ, հեզաճկուն պար, խանդոտ գոտի, կապույտ ծիծաղ, մոմե մատներ, վճիտ լռություն, թափառական ամպեր, սիրակարոտ կույսեր, պղտոր խիղճ, լացող ուռենի* և այլն:

Աշակերտները հարցերի միջոցով գտնում են մակդիրները: Այնուհետև առաջադրվում է մակդիրի արժեքով գործածված ածականներն օգտագործել նախադաս ծավալուն որոշչի կազմում՝ մի դեպքում որպես մակդիր, մյուս դեպքում որպես սովորական որոշիչ: Ուսուցիչը խորհուրդ է տալիս բերել այնպիսի օրինակներ, որոնք խորացնեն աշակերտների գիտելիքները, հղկեն բառընտրության նրանց ճաշակը: Ուսուցիչը բերում է նաև բնագրային օրինակներ և առաջարկում գտնել ետադաս ծավալուն որոշիչները և նշել՝ սովորական որոշիչն են, թե՞ մակդիր: Նրա համար աշխարհը հայրենի հարկ է դառնում՝ *քաղցր ու քերմագին* (Ա. Իսահակյան): Դեռ խավար է այնտեղ՝ *դաժան ու լռիմ*, տրտում է հոգին՝ *հիվանդ ու մեճակ* (Վ. Տերյան): Ո՞վ ուներ մի սիրտ՝ *այնքան լայն ու մեծ*, որ վշտի ծովը ամբողջով տաներ (Հ. Հիրազ): Բյուրեղի պես մաքուր ու արծաթի պես հնչում էր այդ սուղոցը՝ *առատ, շոյիչ ու արբեցնող* (Դ. Դեմիրճյան):

2. Ուսուցիչը գրատախտակին գրում է նախադասություններ, որոնցում աշակերտները պիտի գտնեն ետադաս ծավալուն որոշիչները և նշեն ընդգծված բառերի հոմանիշները. Դեռվից երևում էին լեռներ՝ *խրոխտ ու կոհակավետ գագաթներով*: Ներս մտավ աղջիկը՝ *զվարթ ու ժպտուն*: Կարճահասակ մի մարդ էր՝ *դեղնավուն մազերով*: *ապակու պես փայլուն աչքերով*:

Փաստերը վկայում են, որ դեռևս աղքատ է աշակերտների բանավոր ու գրավոր խոսքը, թույլ են տալիս քերականական ու ոճական սխալներ, շարադասական խախտումներ, դերբայական դարձվածի սխալ գործածություն, դժվարանում են կապակցված, կուռ ու արտահայտիչ խոսք կառուցել: Ուսուցիչը ուշադրություն պետք է դարձնի աշակերտների կապակցված խոսքի զարգացմանը, ձգտի, որ սովորողները օգտագործեն գեղեցիկ համեմատություններ ու պատկերներ: Գաղտնիք չէ, որ հայոց լեզվի ուսուցման ընթացքում ուսուցիչների մի մասը զբաղվում է բառերի ուղղագրական, ձևաբանական վերլուծությամբ՝ աչքաթող անելով բառապաշարի հարստացումը, կապակցված խոսք կառուցելու հմտությունների մշակումը: Կանգնել է բազմաթիվ գրավոր ու բանավոր վարժություններ կատարել դարձվածքների, թևավոր արտահայտությունների շուրջը (*կյանքն ու արևը բաշխել, գլուխն ուտել, բախտավոր աստղի տակ ծնվել, մեկի առաջ խունկ ծխել, արյունն աչքերը կոխել, զվիհն սև ամպ է հավաքվել, դարմանի տակը քուր կապել, դիմակը պատռել և այլն*): Դասկանալի է, որ ժողովրդական իմաստալից դարձվածքները, գեղեցիկ ոճերն ու արտահայտությունները խոսքին հաղորդում են արտահայտչականություն, գունագեղություն ու պատկերավորություն, ունեն ոճական արժեք: Երբեմն աշակերտները գիտեն առանձին գոյականներ, ածականներ, սակայն չեն կարողանում առարկային վերագրել մի քանի հատկանիշ և դրանք դարձնել տրոհվող լրացում: Օր.՝ *ջինջ ու աստղալից երկինք, վճիտ առվակ, անդոխտոր ծորեր, խրոխտ, բարձրաբերձ լեռներ*:

Աշակերտների խոսքը քերականական տարբեր հոմանիշներով հարստացնելու տեսակետից կարևոր նշանակություն ունեն ուղղական, սեռական, բացառական, գործիական, հոլովներով գերադաս անդամով արտահայտված բառակապակցությունները, գոյական որոշիչները, մասնավորապես շարահյուսական կառույցները:

րով ձևավորված տրոհվող որոշիչները: Դամապատասխան կիրառական վարժություններ կատարելուց հետո սկսվում է քարտային աշխատանքը: Աշակերտներին են բաժանվում քարտերը՝ այսպիսի պահանջներով.

1. Ընդգծված որոշիչների կողքին ավելացնել նորերը՝ նախադասությունը դարձնելով բազմակի տրոհվող լրացումներով. բացատրել հնչե՞չերանգը. *Մռայլ, գիշերներին հաջորդեց առավոտը՝ պայծառ, : Այդ մի մատաղ, եղնիկ էր՝ խորունկ, աչքերով*:

2. Տրված բառակապակցություններով կազմել նախադասություններ, որոշել՝ ինչ խոսքի մասերով, հոլովական ձևերով են արտահայտված տրոհվող որոշիչները. Մանուկն էր՝ *տառապանքից իմաստնացած*, զրույցներ՝ *մեր մանկությունից, արկածներից*, մարդիկ՝ *արցունքոտ աչքերով*:

Այսպիսի կիրառական բնույթի վարժություններից հետո տրվում են աշակերտների խոսքն ու բառապաշարը հարստացնող, ստեղծագործական ունակությունները զարգացնող տմային հանձնարարություններ.

1. Տրված նախադասությունների մեջ կետերի փոխարեն դնել համապատասխան տրոհվող որոշիչներ, որոշել նրանց արտահայտությունը, բացատրել կետադրությունը. Մյուսը Մոկաց Արտակ նախարարն էր՝ աչքերով, հոնքերով: Դոգուս մեջ զարթնում են կարոտակեզ հուշերս՝ , , ահա հայրս՝ , մայրս՝ :

2. Տրված նախադասության յուրաքանչյուր համասեռ լրացմանը ավելացնել մեկական տրոհվող որոշիչ լրացում. Դյուրերը Դայաստանում տեսան մարգագետիններ՝ , գետեր՝ , , ծորեր՝ , հիմ բերդի մնացորդներ՝ :

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին՝ տրոհվող լրացման գերադաս անդամը հաճախակի փոխարինել համապատասխան հոմանիշներով, նրան վերագրել նոր հատկանիշներ, տրոհվող որոշիչներ, որպեսզի բառակապակցության յուրացումը դառնա կայուն հմտություն՝ նպաստելով պատկերավոր ու գեղեցիկ խոսքի կառուցմանը. (սեզ-հպարտ, խրոխտ, վեհ, վսեմ, անագորույն- դաժան, անգութ, ժանտ, բիրտ, անողորմ, անողորք և այլն):

Նախադասությունների շարահյուսական վերլուծության ժամանակ աշակերտները հանդիպում են նաև նախադասությունների. Նա իր առջև տեսավ ծանոթ միջնաբերդը՝ *ժառաստանով շրջապատված, ատամնավոր պարսպով ու բուրգերով գոտևորված* (Ս. Զորյան 8, 16): Զախ կողմում՝ մի լերկ բարձունքի վրա, մեր գյուղն է՝ ծածկված *ծյան սպիտակ սավանով* (Մտ 5, 197):

Վերլուծությունից պարզվում է, որ որոշիչը կարող է արտահայտվել նաև դերբայական դարձվածով: Ուսուցիչն անպայման պետք է նշի, որ դերբայական դարձվածը՝ իբրև ծավալուն բառակապակցություն, հաճախ է տրոհվում, բայց դա կատարվում է ոչ բոլոր դեպքերում: Դետաբար պետք է խոսել ոչ միայն ԴԴ-ի տրոհման մասին ընդհանրապես, այլ՝ միայն տրոհվող ԴԴ-ի մասին: Այս միտքը պետք է ընդգծել ԴԴ-ով արտահայտված մյուս տրոհվող լրացումների ուսուցման ժամանակ ևս: Բայական բառակապակցությամբ արտահայտված որոշչի ուսուցումը ուսուցիչը սկսում է դասարանի մասնակցությամբ՝ հիշեցնելով դերբայները: Դայերենի դերբայներից միայն անորոշը, համակատարը, հարակատարը և ենթակայականը կարող են հանդես գալ ինքնուրույն շարահյուսական դերով, նախադասության մեջ այս կամ այն պաշտոնով: Ուսուցիչը հիշեցնում է, որ այս դերբայներից միայն անորոշի սեռականը, հարակատար և ենթակայական դերբայներն ունեն որոշչի գործառույթ:

Աշակերտներին ուսուցիչը բացատրում է, որ դերբայական դարձվածը դերբայներով արտահայտված բառակապակցություն է և ամբողջությամբ վերցրած՝ կատարում է նախադասության մեկ անդամի շարահյուսական դեր: Դիշեցնում է նաև, որ ինչ պաշտոն որ կատարում է նախադասության մեջ առանձին դերբայը, նույն պաշտոնն էլ կատարում է այդ դերբայով կազմված բառակապակցությունը: Այսպես, հարակատար և ենթակայական դերբայները, առանց փոխանվանական կիրառության, կատարում են որոշչի պաշտոն: Այս դերբայներով կազմված դերբայական բառակապակցությունն էլ նույն պաշտոնը կկատարի: Դարցն առաջադրում ենք դերբային և դրանով որոշում նրա շարահյուսական դերը:

Այս բացատրությունը տալուց հետո ուսուցիչն անցնում է հաղորդված նյութի ամփոփմանը, կատարում մի քանի վարժություններ և առաջադրում այսպիսի հարցեր. ո՞ր դերբայներն են բայական բառակապակցություններ կազմում, որպեսզի դերբայը բառակապակցություն կազմի, ի՞նչ պետք է ունենա:

Ուսուցիչը աշակերտներից պահանջում է բերել համապատասխան օրինակներ այս կամ այն դերբայաձևը և պահանջում լրացումներ ավելացնել տվյալ դերբային և ստանալ դերբայական դարձված ու մտցնել ամբողջական նախադասության կազմի մեջ՝ իբրև տրոհվող կամ չտրոհվող լրացում՝ համապատասխան շարադասությամբ:

Նոր դասի ամփոփման ժամանակ գրավոր կամ բանավոր վերլուծությունների համար կարելի է օգտագործել հետևյալ օրինակները. *Սյուների պես երկինք* մխրձված ահռելի քերծերի վրա ոչ մի ծիւ, ոչ մի կանաչ չի երևում: *Ժայռի վրա բարձրացող շիրիմի* մոտ ծեր գուսանը հյուսում էր իր գեղջկական երգը: Մի տուն՝ *մոլորված օտար քաղաքում*, մի ծառ՝ *խոնարհված անժանոթ մայթում*, այսպես են հանկարծ հարազատ դառնում (Գ. Էմին 2, 56): Զգաց, որ ինքը մարդ է՝ *սիրելու, ապրելու, աշխարհին իր աչքերով նայելու հատկություններով*: